

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPÉDIE

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 3

1998 ՄԱՐՏ 21

Ամեն օրի համար ծախվան կանխիկ 50 դր. վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դր.։ Օտար երկրաց համար ծախվան կանխիկ 15 ֆրանկ։ Թղթատարի ծախքը խմբագրության կը վերաբերի։ Հասը 40 փարայ։ Գնաւաններէ բոսթի բուլ ալ կ'ընդունուի 150 դրուոյի օղակ 110 դրուոյ։

ԽՄԲԱԳՐԱԹԵՏ

ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԲՈՂԱՏԳՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒԺԱՆ — Վարժապետանոցէն առաջ։

ԳԱՌՆԻԿ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ — Հայ լեզու։

Յ. Խ. ԱՐՍԼԱՆԵԱՆ — Նամակ առ Խմբագրութեան։

ԲԱՐՈՂ — Վարազդորին ետեւէն։

Ղ. ԲՈՂԱՏ — Պանրագործութիւն։

Ղ. ԲՈՂԱՏ — Արձագանք գիտական աշխարհէն. — Միտիւնէն վերջը։

Ղ. ԲՈՂԱՏ — Պարտիզանական — Մենեւեկ եւ իր մշակութիւնը (վերջ)։

ԱՐԱՔՍԻ — Առտնին տնտեսականը — Անձեռոցները ի՞նչպէս ծաղկելու է։ — Նկարուն կարմիր հաւկիթ։

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ — Գործիքները սրելու խմոր մը։ — Փայտի համար չստանինձ։

Պատասխաններ եւ թղթակցութիւններ։

Հատը 40 փարայ

Կ. ՊԱՌԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԺԻՐ

اختار م. م. — ابراهيم جادو سندھ نومرو ۵۴

ՄԱՆԲԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Գրեց ՏՐ. Ն. ՏԱՀԱՂԱՐԵԱՆ

Սոյն երկասիրութիւնն կը խօսի մանրէնե-
րու վրայ, և կ'արժէ որ ամեն անհատ մէկ
հատ մը ունենայ իր թանգարանին մէջ:

Գինը 10 զրուշ

Կը ծախուի թերթիս Խմբագրատունը
և ամեն Գրաւաճառաց քով:

Հրատարակուած է նաեւ Մեծարոյ Տօք-
թէօրին Ծրանսերէն մէկ նոր հեղինակու-
թիւնը «Տիեզերք և իր կազմակերպու-
թիւնը» խիստ շահեկան և շատ գնահա-
տելի աշխատութիւն մը:

Գինը 10 զրուշ: Կեդրոնատեղի Գրա-
տուն վայս, Բերա Մեծ փողոց:

Ջերմապէս կը յանձնարարենք մեր ըն-
թերցողներուն ՏՐ. Տիգրան փառա Փեշ-
տիմալճեանի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՍՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏԻՆ
անուն երկը՝ որուն գինը 40 զրուշէն զեղ-
չած եմք 10 զրուշի անհատաւորի գնոյն,
սոյն հեղինակութիւն մանրամասն պատ-
մութիւնը կ'ընէ պատուաստի գիւտին և
զարդարուած է լուսանկար պատկերնե-
րով:

Բարեյիշատակ Տօքթօրին ՄԱՆԿԱՏԱ-
ԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 2 հատոր 5 զրուշ: Գաւառ-
ներէն Խմբագրատունս 18 զրուշի թղթա-
գրով զրկողին երկուքն ալ կը զրկուի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ ՄԱՐՏ ԱՄՈՅ

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ. — Աշխարհաբար
գործնական Գերականութիւն և շարա-
դրութեան տարերք—չըջան Ա. — տպգր.
Բ. (տպ. Մատթէոսեան 8) էջ Ա.—է. 120.
— կզմ. գին 2 զրշ. Կեդրոն. Պալենց
գրատուն.

ԽԱՋԻՆԷԻ ՄԷՔԵԱԹԻՊ

ԿԱՄ

ՄԻԻՔԷՄՄԷԼ ՄԻԻՇԱՍԹ

Ահմէտ Բասիմ և Մուսթաֆա Բէշիտ
պէյերու սոյն հեղինակութիւնը իւր տե-
սակին մէջ մէկ հատիկ է, չունենալ
չարժեր:

Ընտանեկան և վաճառականական նա-
մականի ու թղթակցութեանց գողտրիկ
նմոյշներ, գրական հատուածներ, յանձ-
նարարագիրներու, ամանորի տօնի և
այլ պաշտօնական առուրց յատուկ, նաեւ
պատուանշանի և աստիճանի բարձրաց-
ման համար պէտք ըլլալիք շնորհաւորա-
կան գրութեանց շատ սիրուն օրինակներ,
աղերսագրի և խնդրագրի և ասոնց մէջ
տեղը և վերջերը գործածուելիք ամենա-
յարմար բառերու և պարբերութեանց
կտորիկներ ընթացիկ մուրհակաց և բաց
մուրհակաց փոխանակադիրներու, պայ-
մանագրութեանց Սէփէֆէյէ և բողոքա-
գրի և ասոնց նման պաշտօնական գրու-
թեանց անթերի օրինակներու շարք մը
կը պարունակէ, վերջապէս, երկար չընենք,
գործնական մարդու մը համար ստէպ
պէտքը զգացուելիք զիրք մ'է:

Առէք և չպիտի զղջաք:

Գին 15 զրուշ.

Կեդրոնատեղին է՝ Պապը Ալի ճատտէսի
թիւ 46 Առաքել էֆէնտի Թօղլեանի Գը-
րատունը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական և Գիտական

ENCYCLOPÉDIE

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

Թի 3

1898 ՄԱՐՏ 21

Ա Ձ Դ

Մեր յարգելի ընթերցողներէն ներողութիւն կը խնդրենք այն սխառութիւնն համար, որոնք մեր երկու թիւերուն մէջ սպրդեցան, մեզմէ անկախ պատճառներով:

ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅԷՆ ԱՌԱՋ

(Շար. եւ վերջ)

Եւ երբ՝ կրթական խնդրոյն այս ծանր եւ կնճռոտ վիճակին բարեկարգութիւնը կ'ուզենք ձեռք առնել, եւ կը փափաքինք միանգամ ընդ միշտ վերջնական լուծում մը տալ անոր, ամենէն առաջ՝ մեր ուշը ստորակարգեալ պաշտօնական մարմիններու վրայ դարձնենք, եւ անոնց իրաւասութեան սահմանը ճշգրտապէս գծենք:

Թաղ. Խորհուրդներու պաշտօնավարութենէն սկսինք ըսել կ'ուզեմ. վասն զի անոնք՝ առուներ են որ կը հաւաքուին, եւ միանալով կ'երթան ծնունդ եւ սնունդ տալ սա գետին, որ ընդհանրութեան կեդրոնը կը ներկայացնէ:

Վասն զի գետնաշարժի ցնցումներէ ազդուածի պէս, մեր վարժարաններն ալ շարունակ այդ Թաղ. Խորհուրդներու քմահաճոյից ազդեցութեան աակ կը սարսիս, կը տարուբերին. մերթ յախուռն ընթացք

մը կ'առնուն, մերթ եւս կը քայքային: Եւ մենք միշտ կը տուժենք Օրէնքի մեղմութենէն քաջալերող այդ պաշտօնական մարմիններու անսահման իրաւասութեան հետեւանքով:

Թաղային վարժարաններու հսկողութիւնը եւ անմիջական տնօրէնութիւնը՝ պէտք է Ուսումն. Խորհրդոյ ուղղակի իրաւասութեան ենթարկել. եւ ամեն թաղային վարժարան, իր Հոգաբարձութիւնը ունենայ Ուսումն. Խորհրդոյ համարատու: Ըսենք նաեւ թէ՛ այդ վարժարանները պէտք է վայելեն նաեւ այցելու քննիչներու արթուն հսկողութիւնը. ոչ սակայն արդի եղանակով: Բոլոր թաղային վարժարանները վերածել իրենց տարրական ձեւին. եւ առանց բացառութեան, ամենն ալ միեւնոյն ծրագրի կանոններուն կրաւորապէս հպատակեցնել:

Որոշեալ եւ յարմար վայրերու մէջ. 2՝ առ առաւելն 3 բարձրագոյն նախակրթարաններ ունենալ:

Հաստատել կեդր. Բարձրագոյն համակրթարան մը, եւ Ազգային Հիւանդանոցի մէջ ալ, գործնական երկրագործութեան վարժարան մը. կցելով անոր գործնական աշխատանոց մը՝ ուր գործիքներու եւ մեքենաներու նորոգութիւնը կարելի ըլլայ: Եւ հաստատել կիրակնօրեայ վարժարաններ, ուր տարրական վարժարաններէն ելլող եւ գործով զբաղողներու մէջ

ջէն, փափաքողներ կարող ըլլան իրենց մտային կարողութիւնը աւելի մշակելու: Տարրական նախակրթարաններէն սկսելով, հոն աշակերտող ամեն տղայ՝ իր պատկանած Ազգին գոյութիւնը երաշխաւորող կրօնքը սովորի հիմնապէս, առանց սակայն անոր միտքը, Իսրայելացոց հին դարերու պատմութիւններով խճողելու: Մեր կրօնքի վեհութիւնը, իր պարզութեան մէջ ներկայելով անոր, ճանչցնել այդ մատաղ հոգիին՝ Աստուծոյ եւ իրեն մէջ տեղ գտնուած այդ զօրաւոր եւ վսեմ կապին ազատ եւ ճշգրիտ դաւանանքը, առանց ծայրայեղ կրօնամոլութեան դիմելու:

Բարոյագիտութիւնը՝ պէտք է դասաւանդութեանց մէջ կարեւոր եւ ընդարձակ տեղ մը գրաւէ: Այդ մատաղ հասակէն ճանչցնել անոր՝ իբր մարդ իւր պարտքը եւ իրաւունքը: Եւ այդ հասակէն սկսեալ պէտք է սովորի նա, ինչպէս Պետութեան՝ նոյնպէս իր պատկանած Ազգին բարոյապէս թէ՛ նիւթապէս օգնելու պարտականութիւնը, եւայլն: Վերջապէս ի մի բան, մեր բոլոր տարրական նախակրթարաններու մէջ պատրաստուած տղայք գիտէ՞ք ինչ ըլլալ պէտք են:

Իրենց պաշտած Կրօնի եւ պատկանած Ազգութեան հաստատ եւ որոշ գիտակցութիւնը ունեցող բարոյապէս կրթուած անհատներ: Եւ անոնք՝ մեր հին լեզուն զրաբառը՝ սովորելու երբէ՛ք պէտք չունին. աշխարհաբարը՝ եւ մի միայն աշխարհաբարը լաւ սովորելու են. որպէս զի՝ վարժարանէն դուրս ելած ժամանակին, — որովհետեւ մեծ մասամբ անոնք չրապարակի զբաղումներու մէջ ծառայելու կոչուած են — կարող ըլլան նամակ մը կարգալ գրելու ըստ կարելոյն. գիրք մը լրագիր մը կարդան եւ հասկնան կարդացածնին: Առեւտուրի մէջ չի խաբուելու չափ թուագիտութեան քաջ տեղեակ ըլլան. եւ իրենց ունեցածը եւ շահածը, խնայողութեամբ գործածել գիտնան ամեն պարագայի մէջ, տնտեսագիտական օրինաց հետեւելով: Քիչ չափ համառօտ պատմութեան եւ աշխարհագրութեան վրայ ծա-

նօթութիւններ ունենալով, դադարաւոր կազմեն երկրիս արտադրած նիւթերու եւ բերքերու վրայ, իրենց աւանդուած իրագիտութեան դասերով. ինչպէս նաեւ առողջապահիկ օրէնքներու մասին ալ անտեղեակ չ'ըլլան:

Այս պէտք է ըլլայ կարծեմ մեր տարրական նախակրթարաններուն հիմը. ԳԻՉ՝ բայց ՀԱՍՏԱՏ սովորեցնել: Մինչդեռ բարձրագոյն նախակրթարանը, ունենալով է աւելի լայնարձակ ծրագիր մը, ուր աշակերտող պատանին շարունակելով կրօնի եւ բարոյականի դասերը, աւելի ընդարձակ եւ հմտակից ծանօթութիւններով, իր մայրենի լեզուին կատարեալ գիտակցութիւնը ունենայ, հին լեզուի մասին նախնական ծանօթութիւններ միայն ստանալով: Հոս սովորելու է նաեւ Օսմաներէն եւ Ֆրանսերէն լեզուները, գիտութիւններէն կարեւորագոյնները, եւ վաճառականութեան վրայ կարեւոր գիտելիքներ, եւայլն: Ի մի բան այս վարժարանէն պէտք է ելլան ուսեալ տղաքներ, որոնք հրապարակի վրայ առաջնակարգ զբաղումներու յարմարութիւն ունենան:

Եւ Կեդր. համակրթարանի ծրագիրը, պէտք է համապատասխանէ բարձրագոյն դաստիարակութեան բոլոր պահանջումներուն. որ պարզեւէ Պետութեան եւ Ազգին հմուտ լեզուագէտներ — ինչպէս եւ քաջ գրաբառագէտներ — կարող օրէնսգէտներ, ճշմարիտ գիտնականներ, եւ վարպետ մասնագէտներ, բառին բովանդակ նշանակութիւնով:

Թաղային վարժարաններու ծախքերը պէտք է սահմանուին համեմատական հաւասարութեամբ, 'ի սպառ ջնջելով աւելորդ նկատուած շատ մը անկարեւոր ծախքեր:

Ամեն տարի յաւարտ քննութեան, թաղային վարժարաններու յաջողակ եւ յառաջադէմ աշակերտներէն, մրցմամբ եւ որպէս թուով զրկուին, մերձակայ բարձրագոյն նախակրթարանը, եւ կամ երկրագործական կամ արուեստագիտական վարժարաններէն մին:

Բարձրագոյն նախակրթարաններու ծախ-

քերը պէտք է հոգացուին Կեդր. Սնտուկէն՝ Ուսումն. Խորհրդոյ իրաւասութեան տակ։ Ամեն թաղ՝ իր եկեղեցիի եւ դըպրոցի պէտքերը մատակարարելէ վերջը, իրեն բաժին ինկած որոշեալ գումար մը յանձնելով Կեդր. Սնտուկին, եւ մասնաւոր հանգանակութիւններէ եւ նպաստներէ զոյացած արդիւնքը նաեւ յատկացնել այդ հաստատութեանց յարատեւ յառաջդիմութեան։

Այսպէս պէտք է ըլլան նաեւ Կեդր. Համակրթարանը, երկրագործական եւ արուեստագիտական վարժարանները։ Եւ 2—3 տարին անգամ մը, միշտ մրցմամբ եւ որոշեալ թուով աշակերտներ զրկենք եւրոպական բարձրագոյն համալսարանները, մեր պէտքերու պահանջմանց գոհացում տուող վարպետ մասնագէտներ հասցնելու համար։ Եւ յետոյ կառուցանենք անոնց հիմերուն վրայ հաստատուած պէս մեր ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅԸ։

ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒ

Բ.

Լեզու. — Լեզուներու տեսակները պարզելէ առաջ ակնարկ մը նետենք նախապատմական կամ լաւ եւս նախական մարդուն լեզուին վրայ։ Լեզուին ծագումը ըստ եւրոպայի նշանաւոր գիտնոց եւ փիլիսոփայից կը կարծուի թէ ի սկզբան միօրինակ եղած ըլլայ, եւ շատեր համակարծիք են այս գաղափարին։ Նախամարդը իր ընկերուհոյն հետ խօսելու համար՝ չենք կրնար հաւաստի ըլլալ թէ այսօրուանին պէս կազմ ու պատրաստ լեզու մը կը գործածէր։ Մարդ հասնէր իր ստեղծուած ատեն, մանկան պէս ճիչեր էին միայն իր խօսքեր. եւ այս՝ իր շուրջը գտնուած առարկաներ

ունէն եւ էակներուն, այս կամ այն վիճակէն ազդուելով, եւ կամ անոնց բնական ձայներուն նմանութիւնէն կազմուած միավանկ բառերն էին, որ իր լեզուն կը կազմէին։ Յաւը արտայայտել ուզած ատեն «օֆ, ոհ» պոռալն սովորական էր։ Բարկութիւնը կամ թշնամանքը «այ, ով» բառերով կը յայտնէր։ Կանչելու կամ ձայն տալու համար «է» միայն բառական էր։ արհամարհանքը՝ կը բացատրէր «վայ, վահ» բառերով։ զարմանքը յայտնելու համար «ահ»։ Վերջապէս իր հոգւոյն տարբեր տարբեր վիճակներուն համեմատ, զանազան միջարկութիւններ կ'արձակէր, որոնք իր զգացածին ճշգրիտ նշանակութիւնը կուտային։ Այդ միջարկութիւններն, որոնք կըրնան զօրաւոր ապացոյցներ ըլլալ այս խնդրին լուծման, ցայսօր միօրինակ մնացած են մարդուն քով առհասարակ, հոգ չէ թէ այն հայ, յոյն, հըրէայ, պարսիկ կամ արաբ եւ այլ ինչ է։ Բովանդակ ազգերու ձայնարկութիւններն ալ իրարու կը նմանին, տառական աննշան փոփոխութիւններով եւ ամենն ալ միավանկ են գրեթէ։ Ըսել է թէ, մարդն ի սկզբան յօդաւոր լեզու մը չունէր կամ չէր խօսէր, այլ խել մը կցկտուր ձայներ, որոնք իր խօսակցին կրնային հասկցընել իր դաղափարը եւ որոնք ապագային զանազան երեւոյթներէ անցնելով պիտի կազմէին ասպագայ լեզուն։

Մանուկը, թողո՛ւնք օտարազգի մանկտին, որոնք իրենց յատուկ լեզուն ունին կամքերնին յայտնելու, մասնաւորապէս հայ-մանուկը, օրինակի համար՝ ջուր ուզած ժամանակ «մպո՛ւ, մպո՛ւ» կ'արտասանէ եւ ուտելիք խնդրելու համար՝ «մա՛, մա՛...» կը թոթովեն։

Հայ մայրերը շատ լաւ ուսումնասիրած են այս երկու միավանկ բառերը, զոր մանուկը մեքենաբար կը կրկնէ յաճախակի՝ մին միւսին ետեւէն հասցընելով։ Ահա ապացոյց մը հոս՝ մարդուն նախնական լեզուին միավանկ ըլլալուն։

Հիմա, քննենք թէ՛ ինչպէս ջուր և «պէտէ» նշանակութիւնները կ'ելլեն վերոյիշեալ բառերէն. «մպուլ»ին ըմպելի նշանակութիւնը՝ երկու շրթունքներուն իրարու հպումէն յառաջ եկած ձայնին մէջ է, քանի որ մարդ ջուրը խմած ժամանակ այդ շարժումը պիտի ընէ։ զարմանալի զուգագիպութեամբ մ'ալ խմել բառին գրաբարն է «պուլ», որ կարծես խիստ մօտիկ է վերի «պուլ»ին։

Իսկ «մա», «մա»ին կերակուրի իմաստը՝ ծամելիքներուն մին միւսին վրայ իջնելով՝ բերնին տուած շարժումէն առաջ եկած ձայնին մէջ է. այս երեւոյթը երկու տեսակ կրնանք մեկնել, կամ այն է որ՝ մանկան ծնողքը սովորեցուցած է այդ և ատոնց նման բառերը, որով ըսել կ'ըլլայ թէ հիմակուան մարդն իսկ զգալով թէ մանուկը ջուր կամ կերպար բառերէն ունի նշանակութիւն, մտադրիր է մանկան անանկ հասկանալի հնչում մը ստեղծել, որ ջուրի գաղափար տայ. և կամ այն է որ մանուկը ինքնաբերաբար յօրինած է այդ միավանկ հնչիւնները կամք մը յայտնելու համար։ Այս վերջինը աւելի հաւանական կը թուի և այնպէս կ'երևի թէ ասոր ծագումը կը շօշափէ նախաստեղծ միավանկ ձայներն։

Նպատակնիս չէր անշուշտ «մա», «մա»ն և «մպուլ»ն փաստ բռնել մի խնդրին. այլ աւելի օրինակ մը տալու համար էր որ իբր փոքրիկ ապացոյցներ մէջ բերինք ատոնք։ Արդէն ա-

տոնց նման կան կարգ մը՝ ըստ չափահասից անիմաստ, մանկական ձայնահնչիւններ, որոնք, անտարակոյս, թոթովող տղուն բերնին մէջ նշանակութիւններ կ'ունենայ։ Իւրաքանչիւր ազգի մանկտին ունի իր լեզուն, որ մանկական լեզու (langue enfantine) անունով կը ճանչցուի։ Փրանսացիք արդէն շինած ունին այս վերնագրով բառարաններ, ուր մանկան սաղմնաւոր լեզուին բառերն կը պարունակուին։

(Շարունակելի)

ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՌԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագրութիւն Հանրապետութիւն,

Ձեր Հանրապետութիւն 1 թիւն հրապարակէն գնելով, վերահասու եղայ պարունակութեանց. եւ համոզուեցայ որ խիստ օգտակար միջոց մը պիտի կրնայ ըլլալ ժողովրդեան ամեն գասակարգին, մանաւանդ իր տեսակին մէջ միակ եղող՝ արհեստական բուսաբանական գիտական եւ տնտեսական հարցերուն, խորհուրդներուն եւ դասերուն համար։ Իրաւի՝ ժողովրդեան օգտակար ըլլալու գերազանց միջոց մ'է որ ի գործ պիտի դնէք Հանրապետութիւնը. կը մաղթեմ յաջողութիւն եւ կարողութիւն. բայց նաեւ կուգամ ջատագովել ձեր այն գաղափարն եւ խոստումն, զորս կուզէք եւ կը կամիք ի գործ դնել. արհեստական եւ գիտական ծանօթութիւններն եւ բառերն, ժողովրդեան ամեն գասակարգին զիւրմիտներին, իմացատնութեան յարմար, այսինքն՝ ուսման համար մեկնութեամբ ի յայտ բերել, որնոր խիստ գնահատելի է։ Եւ թէ սա ալ կը յաւելում թէ՛ այս տեսակ արհեստական կամ գիտական յոգուածներ եւ տեղեկութիւններ խիստ կարեւոր եւ օգտակար ըլլալուն, պէտքը խիստ պարզ եւ աշխարհաբար եւ մինչեւ իսկ Տաճկ. բացատրութեամբ եւ օրինակելի մեկնութեամբ ըլլայ։ Ինչպէս որ դուք եւ մեք համոզուած ենք, ի ստորեւ պիտի դնեմ այն բառերն, որոնց

աշխարհաբարն եւ Տաճկերէնն զլացեր էք
դնելու ձեր 1 Թիւին մէջ, Ուեէ գրութիւն
կրնայ տաղտուկ պատճառել այն ընթեր-
ցողին՝ որուն աշխարհաբարն եւ կամ Տաճ-
կերէնը չէ տրուած. որովհետեւ չէ կրցած
լաւ մը իր մտքին մէջ տեղաւորելու :

Ահաւաստիկ ,... Տեարք, իմ փափաքս
ձեր ձեռնարկի մասին, որ ի բոլոր սրտե
յաջողութիւն կը մաղթեմ, եւ կը խնդրեմ
որ ձեր այդ գնահատելի աշխատութիւնը,
աւելի արդիւնաւոր ըլլալու համար, իմ
բարեկամական խորհուրդներս նկատողու-
թեան բարեհաճիք առնել, ձեր խոստման
մէջ չը թերանայով :

Մասնաւորաբար կը շնորհաւորեմ Ղ. Բո-
լաո Էֆէնտին, իւր ուսումնական գրու-
թեանց, եւ տեսութեանց մէջ, որչափ
պարզ՝ այնչափ գեղեցիկ եւ անուշ ոճին
եւ բացատրութեանց համար ցոյց տուած
յաջողութիւնը :

Սագիլ. այս բառին գաղ.ը գրած էք. եւ որովհետեւ գաղղիերէն չեմ գիտեր՝ չը հասկցայ, պէտք է Տաճկերէնն ալ դնել, աւելի լաւ կըլլայ եթէ կցէք, օրինակելի բացատրութիւն մ'ալ, զորօրինակ, (նման չէ՛ս չէ՛մ է՛ն ի, եւ կամ եւայլն, եւայլն):

ԱՅՈՒՆ. Կոնստանտին, Մարտին, Մանիշակ (ասոր
ալ բազարները ծախուած մանիշակներն ալ
կան դեղինով, ֆէրի գոյնով եւ ուրիշ զա-
նազան գոյներով եւայլն). ողբի, Խաթաֆոյն
յարահատ, նորոցեւ, փերոն, Խոյան, Շարպ,
Գալիան, Խալիպիտ, ալանդեր, պարզապ, շե-
բեֆ, Բղաւ, Կոնստ, պղպոտք Բիւ. անշուշտ
այս բառեր ձեր ծիծաղը կրնայ չարժեւ,
կարծելով որ ամեն դասակարգեր կրնայ
հասկնալ, բայց կը սխալիք: Օր մը ական-
ջը Խոսի Կ. Փանոսեանի՝ Խոսակցութեան
մը մէջ դիտողութիւն ըրած է թէ, (բայց
եւ այնպէս, քանզի, ապա թէ ոչ) բառե-
րը հասկցող քիչ կայ, այն ատեն ես ալ
զարմացայ, բայց այս օր կատարեւապէս
համոզուած եմ: Ձեր Հոն-թէրաֆի 1 թիւն
միայն այս փոքրիկ թերութիւնն ունենալ
կը թուի ինձ: Ուրիշ դիտողութիւն մը
եւս, կապերտներու պահպանումին վրայ:

Մեք մեր տանը կապերտները պահպա-
նելու մէկ քանի միջոց ի գործ կը դնենք,

կ'աւելնք, կը մաքրենք, որ է փոշիներէ
պահպանում. երկրորդ՝ շատ աղտոտի նէ
ծովը կը դրկենք. երրորդ՝ ամառները կը
քակենք՝ պողջայի մէջ կապելով կը պահպա-
նենք եւայլն, եւայլն. բան մը կայ որ ա-
մենէն գէշն է, այսինքն ցեցերը, մենք ա-
տոր դարման մը կ'ուզենք ընել, բայց ձեր
տուած պահպանման միջոցը ինչէ կը պահ-
պանէ կապերտները, խնդրեմ այդ կէտն
ալ նկատողութեան հաճիք առնել մովթը
չը ձգելով: Որովհետեւ այդ տեսակ մի-
ջոցներ ցոյց տալ միշտ օգտակար է:

Ինչպէս ըսի ձեր Հանրապետիկ կատարուեալ յաջողութիւն մաղթելով հանդերձ, կը խնդրեմ որ իմ այս բարեկամական տեսակետինս չը նկատե՞ք քննադատութիւն մը կամ խծբծանք մը, այլ ընդունեցէ՛ք զայն, իբր պարզ բարեկամական անկեղծ արտայայտութիւն մը, որով կրնայ իմ այս տեսութիւնս ալ իւր օգտակարութիւնը ունենալ: Ընդունելով . . . Տեսաք սոյն բարեկամական մաղթանքներս:

Ձ. Խ. ԱՐՄԼԱՆԵԱՆ

Շնորհակալութեամբ ընդունեցանք ձեր
դիտողութիւնները. ըստ կարելոյն պիտի
համակերպինք ձեր ըսածներուն. մեր նը-
պատակը՝ միեւնոյն անգամ հայերէն լե-
զուն ալ մշակել ըլլալուն, կը փափաքինք
մաքուր չախարհիկ լեզու մը գործածել,
մերթ ընդ մերթ իրենց նշանակութիւն-
ները տալով։

Ծ. ԽՄԲ.

ሀ . ከሆኑ .

ՀԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԵԻԷՆ

ՀԱՐՈՒՍՏԻՆ ՈՂՈՐՄԵԼԻՆ

Հաճի աղային հաճի Խաթունը բաղնիք
պիտի երթայ: Քուրջերու ծրարը իրմէ
առաջ բաղնիք հասած է:

Ինք ալ կը հասնի իր հետեւորդներով.
բաղնիքսունհին բաղնեց զոնէն կը դի-
մաւորէ փնքը հազար ու մէկ շողբորդու-
թիւններով:

Հաճի Խաթունը բիւր նազանքներով Կը

հանուի. անութները կը մտնեն եւ կ'առաջնորդեն զինքը դէպ ի բաղնեց ներսը: Իրեն համար որոշուած տեղը չի համար հաճի խաթունը:

Դիմացի կողմն ալ աղքատիկ կին մը իր չորս լաճերը առջեւը շարած տաք ջրով կը չափչփէ զանոնք:

Անոր տեղը կ'ուզէ գրաւել. ի՞նչ կ'ըսեն չի համոզուիր. անողոք է հաճի խաթունը:

Աղքատիկ կինը կ'ընդդիմանայ. ո՛չ տեղի տալ կ'ուզէ, ոչ տեղը տալ:

Բաղնեպանուհին ներս կը կանչեն:

Այս խորամանկ մեղեքան անուշութեամբ կ'աշխատի համոզել աղքատուհին. կը նայի որ չպիտի ըլլայ, խեղճ կնկան թեւէն քաշածին պէս բաղնեց մէջտեղը կը նետէ. լաճերուն ալ մէյմէկ կից տալով մօրերուն քով կը զրկէ:

Անարգ մամոնան կը յաղթանակէ:

Եւ յաղթական հաճի խաթունը կատարեալ խղճի մտօք լուացուիլ կը սկսի:

* * *

Սակայն բաղնիքինով չի լնար:

Հաճի խաթունը Հաճի աղային գանգատած է իրիկունը: «Ճա՛նը՛՛, չե՛ս գիտեր, Մարկոսենց Պաղտիկին քո՛ւսը է է՛լէ՛»:

Հաճի աղտն կը բորբոքի. «Կեցի՛ր, ես վաղը անոր էրկանը սորվեցնեմ»:

Հաճի աղան հաճի խաթունին արձագանքը ըլլալով այս բաղնեց աղտոտ կուրը չուկան կը փոխադրէ:

Հետեւեալ օրը կարգ մը սպառնալիքներ Պաղտիկ աղբօրը գլխուն արեւուն կ'իջնէ նախատալից հայհոյանքներով համեմեալ:

Եւ այս միջադէպը տեղի կ'ունենար դաւառի մը անկիւնը:

* * *

Տարիներ անցած են. Պաղտիկ աղբար Պոլիս փոխադրուած է ընտանիքով, աղքատ թաղի մը մէջ իր իւզովը կը տապկուի կը կենայ:

Տարի մըն ալ գործի բերմունքով Հաճի աղան կը գաղթէ Պոլիս ընտանիքով եւ միեւնոյն թաղը կը բնակի:

Ի հարկէ զուգադիպութիւն պիտի ըսենք ասոր:

Եւ օրին մէկն ալ թէ հաճի խաթունը թէ Մարկոսենց Պաղտիկին քո՛ւսը միեւնոյն բաղնիքը կը գտնուին:

Ասո՛ր ալ զուգադիպութիւն ըսենք:

Հաճի խաթունը իր թշնամուհին կը ճանչէ: Կարծես թէ այնչափ տարիներէ ի վեր իր սրտին ոխակալ կրակը չէ մարած. հոս ալ միեւնոյնը ընել կ'ուզէ աղքատիկ կընկան:

Սակայն խեղճ հաճի խաթունը չէր գիտեր որ միջավայրի փոփոխութիւնը իր հետ սարք ու բարքի ալ փոփոխութիւն կը պահանջէր:

Բաղնեպանուհին իր քաղբինը չէր. չախով մը ամօթահար կ'ընէ զինքը:

Բաղնիքին մէջ գտնուող կանանց մէջ փսրտուք մըն է կ'սկսի եւ հետզհետէ կը բարձրանայ:

— Ո՞վ է աս կնիկը:

— Ով գիտէ ով է... հարբին մէկը է՛լէ՛:

— Դուրսեցի է դուրսեցի՛:

— Պէ՛լի՛ պան է... վրայէն իշու պէս կը զռայ կոր դրսեցի ըլլալը:

— Հա՛, հա՛... ես ճանչցայ... ուր է մեր քովը մեծ տուն մը կայ... ամիս մը առաջ ըսին թէ դուրսեցի մը բռներ է... ան է ան... անոր կնիկն է:

— Վա՛յ պօյիդ պօսիդ պօստըկեմ... ի՞նչ ալ աղուոր է... կ'երեւայ թէ իր քաղաքը գիտցաւ հոս:

— Իրաւունք ունի հաճի խաթունը... ան կնիկն ալ ի՞նչ ըսելով տեղը չի տուաւ, ասանկ աղուորիկ խանրմ խաթսնի մը խաթըրը կը կոտրեն հէ՛լ:

— Շիտալը ըսելով իմ տեղս ուզեր կուտայի ես:

— Ո՞ր մենծ աղային կնիկն է հա՛պա:

— Ո՞ր բոշային... ըսէ սըվոր:

Հաճի խաթունը այս ծաղր ու ծանաւ կին դէմ կը սրտնեղի, կը գայրանայ, եւ վերջապէս չի դիմանալով լալկան շեշտով եւ գլուխը երեքցնելով մը «Կեցի՛ք... ես իրիկունը Հաճի աղայիս ըսեմ տէ կը տեսնէք դուք» կ'ըսէ:

Խեղճ ու կրա՛կ, ողորմելի հաճի խաթունը սպառնալիք կ'ընէր կանանց:

— «Ես երկու տարի է պաք չեմ բռներ,

բայց անոր տեղը ուխտած էի բնաւ չի խնդալ... ա՛լ ասոր չեմ դիմանար» ըսելով քահնապետին է կը փրցնէ կին մը:

Եւ հաճի խաթունին սպաննալիքը կանանց կողմէ ընդհանուր քահնապետ մը կ'ողջունուի:

Կը կատարի հաճի խաթունը եւ լուացքը կէս ու կիսկատար թողլով կ'ելլէ դուրս:

Այս անգամ յաղթանակը Մարկոսեանց Պաղտիկին կնկանն էր:

Եւ այս բաղնիքի միջադէպը օրերով կանանց բերնի ծով կ'ըլլայ թաղին մէջ:


*

Երկար բարակ խորհրդածութիւն մը չեմ կարող ընել. պարզապէս կ'արգահատիմ այս տեսակ ողորմելի հարուստներուն վերայ: Միայն թէ ամեն անգամուն հարցում մը կուգայ լեզուիս ծայրը «Թէ ինչո՞ւ ըլլան այսպէս»:

Եւ այս «ինչո՞ւ»ն է որ անլուծելի կը մնայ ինձ համար:

ՔԱՐՈՂ

ԳԻՒԼԱՏԵՏԵՍԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍ



ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Պէտք է՝ արդեօք ներբողներ կարդալ ծանօթացնելու համար սա պանիրը, որ իր օգտակար եւ սննդարար յատկութիւններով հարուստին թէ աղքատին սեղանները կը պատուէ հաւասարապէս. եւ որ աւելին է՝ գիւղատնտեսական ճարտարարուեստներուն մէջ ալ կարեւոր տեղ մը կը յռնէ. մասնաւորապէս մեծ եւ բազմամարդ քաղաքներէ հեռի գտնուած ագարակներու համար, ուր արտադրուած կաթը իր բնական վիճակին մէջ շահագործելու անկարելիութիւններ կան. որ սակայն կազմափոխուելով, երկար ատեն կը դիմանայ, փոխադրութիւնը կը դիւրանայ, եւ երկրագործը նոր շահու աղբիւրներ յառաջ կը բերէ, պանիրէն աւելցած շիճուկով կարգ մը անասուններ բնուցանելով: Արդէն առանց անասնա-

բուծութեան, երկրագործութիւնը գոհացուցիչ արդիւնքներ չի կրնար յառաջ բերել. եւ առանց գիւղատնտեսական ճարտարարուեստներու օժանդակութեան ալ, երկուքին միութիւնը միշտ ամուլ կը մնայ: Երկրագործը որչափ շատ անասուն պահէ, այնչափ շատ աղբ կ'ունենայ իր տրամադրութեան տակ. որով՝ իր արտերը բարգաւաճ վիճակ մը ստանալով՝ արտադրութիւնները կը բազմապատկին, եւ իր առջեւ ճարտարարուեստական զբաղումներու ընդարձակ ասպարէզ մը բացուելով, զանոնք արդիւնաւոր կերպով շահագործելու կարելիութեան մէջ կը գտնուի:

Միջին հաշուով, 10 քիւլօ խոտը, կամ իր համադրը՝ (այսինքն ուրիշ սնունդներ, որոնք տարրեր քանակութեամբ՝ արուած խոտի քանակութեան չափ սնունդիչ նիւթեր կուտան. կանանչ խոտ, հընտեղէն կամ ընդեղէն, եւ) 4 լիթրա կաթ կուտայ, եւ 10 լիթրա կաթն ալ (կովի) 1 քիւլօ պանիր. ըսել է, 1 քիւլօ պանիր արտադրելու համար, 25 քիւլօ խոտ պէտք պիտի ըլլայ. արդ՝ աւելի դիւրին չէ՞ միթէ 1 քիւլօ պանիր փոխադրել, քան 25 քիւլօ խոտ, որ կենդանեաց սնունդն վերապահուած ըլլալուն համար, համեմատաբար՝ իր կազմութեան մէջ մոտած սնկեղանը (ագոթ) աւելի աժան գնով կը ծախուի: Երկար տարիներէ ի վեր, Եւրոպական կարգ մը պանիրներ սկսած են երեւիլ Պօլսոյ հրապարակին վրայ. խնդրանքներ անսպակատ են, եւ անոնց շահագիտութիւնը արդիւնաւոր. բայց մեր երկրագործ-անասնաբոյծները երբէք աչքերնին այն կողմը չ'են դարձնէր, եւ կը շարունակեն իրենց հնաւանդ գրութիւններով շինուած պանիրները հրապարակ նետել, ուրոնք շատ անգամներ իրենց թերութիւններով հեռի կը մնան շահաբեր ըլլալէ: Մեր պանիրները, արուեստին պահանջումներուն համաձայն չի շինուելով, կարելի չէ գտնոնք երկար ատեններ պահել, կ'աւրուին եւ երթալով կծութիւն մը յառաջ կը բերեն: Ասկէ զատ՝ անոնք ամեն երկրի ժողովրդեան

ճաշակին յարմար չըլլալով, միմիայն տեղական պիտոյից համար սպառում կրնան գտնալ, երբ Եւրոպական պանիրները աշխարհիս ամեն կողմերը կը փնտռուին և լաւ գիներով կը վաճառուին: Երկրագործ մը իր աչքը չորս բանալու է — ինչպէս կ'ըսեն —, և իր շահու աղբիւրները փնտռելու է:

Բայց երբ այս տողերը կը գրենք, և երկրագործներուն կը յանձնարարենք այս ճարտարարուեստը. չենք մոռնար յիշեցնելու թէ, պանրագործութիւնը եթէ չահաւէտ է, և այս միջոցով հողային բերքերու մէկ կարեւոր մասը կազմափոխելով, անոնց սպառումը դժուարացուցած կ'ըլլայ. միեւնոյն անգամ ալ հողին բուսարեր կարողութիւնը զգալապէս տկարացուցած կ'ըլլայ. վասն զի՝ պանիրի արտածութիւնը իւր հետ կ'առնէ կը տանի հողին անկենդանային տարրերուն հետ մաս մ'ալ հանքային աղեր, բոլորովին երկրէն դուրս, և եթէ զանոնք չի վերադարձնենք իրեն, հետզհետէ տկարանալով, իւր արգասաբերութեան աստիճանը պիտի իյնայ. ինչ որ կը պատահի առհասարակ մեր երկիրներու մէջ, և առանց պատճառը գիտնալու կամ փնտռելու, յանցանքը հողին, ժամանակին կամ պարագաներուն եւայլն կուտանք:

Տեսէք հիմա, 1 լիթրա կաթին մէջ վեր լի վերոյ 45 կուամ բնապանիր (անկենդանային նիւթեր ըսածնիս. — ֆալէն —) կայ. եթէ միջին հաշուով մէկ կովը տարեկան 1200 լիթրա կաթ տայ մեզի, ըսել է իր սնունդէն՝ 54 քիլո անկենդանային նիւթ առած պիտի ըլլայ իր արտադրած կաթին կազմաւորութեան համար. և այդ քանակութեամբ կաթի արտադրութեան համար ալ հարկ պիտի ըլլայ միջին հաշուով 3000 քիլո խոտ կամ իր համազօրը կերցնել, որ արտադրութիւնն է վեր լի վերոյ միջնակարգ հողերու 10 հին արտադարին. ըսել է, ամեն տարի մէկ կովին արտադրած կաթէն շինուած պանիրը, 10 արտադար տեղէն վերացուցած պիտի ըլլայ 54 քիլո անկենդանային նիւթեր, կամ 10—15 քիլո զուտ ան-

կենդան և հանքային աղեր, որոնց մէջէն մասնաւորապէս կիրքի լուսածնատը (ֆոսֆոր Դը 20, ոսկոր շինող տարր) առնելով, անվերադառնալի կերպով հեռուները պիտի տանին: Այս հաշիւէն կը հետեւի որ, հողերուն արգասաբերութիւնը անվթար պահելու համար, իրենցմէ կորուցած նիւթերը ոեւէ միջոցով կրկին վերադարձնել պէտք է, և հոս կը կայանայ հողերը աղբելու հարկեցուցիչ պէտքը: Որովհետեւ այս տեսութիւնը մեզի շատ հեռուները կրնայ տանիլ, այս մասին պէտք եղած տեղեկութիւնները ուրիշ առիթի վերապահելով, կ'անցնինք պանիրի պատրաստութիւնը բացատրելու:

Պանիրի շինութիւնը հիմնուած է գըլխաւորապէս, ոեւէ ազդակի միջոցաւ կաթը ընդամածելուն (ֆալէն, ֆալէն) վրայ, որ կարծր նիւթերը յատակը իջեցնելով՝ հեղուկէն կը զատէ. մին կը կոչուի մաճառակ, (lait caillé — կարծր նիւթերը), իսկ միւսը շիճուկ: Մաճառակը առնելով կը մզեն, իւր մէջը գտնուած շիճուկը և պանրէթանը բոլորովին հանելու համար, և յետոյ պատրաստուելիք պանիրին տեսակին համեմատ զանազան գործողութիւններու կ'ենթարկեն:

Շատ մը նիւթեր կան, որ կաթը ընդամածելու յատկութիւն ունին. ինչպէս թթուները, ալքոլը, մէկ քանի բոյսերու հիւթը, — զորօրինակ թզենիինը, կանկառի ծաղիկները, թրթնջուկները (ֆալ- ֆալ- ֆալ- ֆալ- եւայլն. բայց իրենց ներգործութիւնը շատ անգամ անորոշ է, և ոմանք ալ իրենց համը կամ հոտը կը փոխանցեն պանիրին:

Անատուլուի մէկ քանի տեղերու հովիւները գիտնալով թզենիի հիւթին մակարդիչ յատկութիւն ունենալը, ամառը թզենիի ճիւղերը կտորտելով, առաջուց պատրաստած մանր լաթի կտորուանք անոնց հիւթին մէջ կը թաթիւնեն, և չորցնելով կը սահեն. երբ պէտք ունենան, որոշեալ քանակութեամբ կաթի մէջ այդ լաթի կտորներէն ձգելով, իսկոյն կը մակարդեն. որ շատ անգամ ճամբորդներ

յողնած խոնջած, ամառուան տաքուն երբ կը հանդիպին ոչխարներու հոտի, ուր կ'ուզեն պահ մը հանգչիլ և իրենց ծառաւ անցնել, հովիւները լաւ գիտեն այդ պարագային մէջ իրենց մոգական լաթի կտորով վայրկեան մը զարմանք պատճառել իրենց անցորդ հիւրին: Բարձր մը կաթ կը կթեն, և այդ լաթէն մէջը ձգելով, կը մակրդեն զայն խոյն և կը հրամացեն:

Սակայն բուն մակարդը կը պատրաստուի միմիայն կաթով ապրող գառնուկներու կամ աւելի աղէկը, հորթերու չորրորդ սաամաքէն, որ կը կոչուի խախացոց (ჭეჭრ უკეცრ), որ մասնաւոր հիւթ մը արտադրելով, երբ կենդանին ողջ է, կերած կաթը հոն կը մակրդի, և այնուհետեւ կ'անցնի մամացարեր երակներուն մէջ:

Ամեն տեղ տարբեր եղանակներով կը պատրաստեն մակարդը, որոնց վրայ հարեւանցի ակնարկ մը նետելով միայն, պիտի անցնինք ամենէն աղէկ դրութիւնով պատրաստուածներուն վրայ խօսելու: Նախ ըսենք թէ, ինչպէ՞ս կը պատրաստեն թուրքիոյ պանրագործները իրենց մակարդը: Որովհետեւ կաթ ուտող հորթեր շատ քիչ անգամներ կը կտրուին մեր երկիրները, բաղդատմամբ գառնուկներու, այդ պատճառաւ անշուշտ՝ իրենց պանիրի մակարդը, գառնուկներու խախացոցէն պիտի պատրաստեն: Կենդանին մորթուելէն վերջը, բարդը (իշէ-պէն) առնելով կը գատեն վրայէն խախացոցը, որ արդէն մակրդած կաթով լեցուն կըլլայ՝ անորոշ մեծութիւններով և խորգութեամբ մակերեւոյթով հատիկներու վերածուած: Նիւթ կենդանին երբեմն խոտ ալ կերած ըլլայ, — ինչ որ պատահական է —, մակրդուկին հետ խառն կը գրանուի: Խախացոցին պտուղնակութիւնը կը պարպեն, կը լուան զայն անգամ մը, և աղի հետ խառնելով կը լեցնեն կրկին անոր մէջը, կը կապեն բերանը և կը կախեն զով տեղ մը, որ ինքնիշէն չորնայ: Պանիր շինած ատեննին կը բանան և մէջի մակրդուկէն սեւէ քանակութեամբ առ-

նելով կը յարեն ջուրով, և կը լեցնեն կաթին մէջ:

Պօլսոյ շրջակաները այս դրութեամբ կը պատրաստեն ընդհանրապէս, իսկ գառնները մակարդին հետ կը խառնեն կարգ մը չոր մրգեղէններ, որոնք օգտակարութենէ զուրկ ըլլալով հանդերձ, շատ անգամ պանիրին ալ տարբեր համեր կուտան: Խառնած միւրգերնուն մէջ գլխաւոր տեղ մը կը բռնեն չամիչ և թուզ: այս վերջինը թերեւս այն ենթադրութեամբ թէ՛ ծառին արտադրած հիւթը՝ կաթը մակարդելու յատկութիւն ունենալով, պտուղն ալ նոյնը կրնայ ըլլալ, ինչ որ շիտակ չ'է: Եւրոպայի մէջ կը գործածեն առ հասարակ կաթնասուն հորթերու ստամոքսը, որ կը պատրաստեն հետեւեալ կերպով:

Թարմ խախացոցները կը պարպեն, մէջի խախացը (մակարդուած կաթին փսորտութեամբ) կը նետեն, և զանոնք աղէկ մը լուալ և մաքրելէ յետոյ, ներսը և դուրսը կ'աղեն և կը շարեն հողէ ամանի մը մէջ կարգ մը խախացոց և կարգ մը աղ, բերանը կը գոցեն ծակակուած հաստ թուղթով մը, և կամ պարզապէս պնակ մը կը դնեն, և կը պահեն այսպէս զով տեղ մը: Այս կերպով խախացոցները շատ երկար կրնան դիմանալ, և երբ ուզեն մակարդ պատրաստել, կը հանեն պտուկին մէջէն պէտք եղածին շափ խախացոց, կը քամեն և մէջը փայտի կտոր մը դնելով կը կարկամեն, յետոյ կը կախեն որ՝ կաթիլթելով չորնայ մէկ քանի օր: Այն ատեն խախացոցը բարակ բարակ կտրտելով կը դնեն ամանի մը մէջ, վրան կը լեցնեն ընդհանրապէս տաք ջուր, և կամ քացախախառն ջուր, կամ ճերմակ գինի, պանիրի թթութեամբ, շիճուկ, եւայլն: Երբեմն ալ հետը կը խառնեն մեխակի կամ պղպեղի հատիկներ եւայլն, և կը թողուն 36—48 ժամ այսպէս, յետոյ պարզուտէ անցունելով կը գործածեն հեղուկը:

Հոլանտայի և Գերմանիոյ մասլաճառները իրենց մորթած հորթերուն խախացոցները լուալ մաքրելէն վերջը, կուռեցնեն և կախելով կը չորցնեն, և այս վի-

ճակին մէջ կը ծախեն երկրագործներուն, որ գործածելու համար բարակ շերտերու կը վերածեն զայն և վերոյիջեալ հեղուկներէն մէկուն մէջ թրջոց կը դնեն:

Թէեւ տեղական մակարդներէն աւելի աղէկ, բայց միշտ ասոնք ալ իրենց պակասութիւնները ունին. նախ պղտոր կ'ըլլան և իրենց մէջ կը պահեն քիչ շատ զգայազիր կենդանական նիւթեր, ինչպէս և խմորուկներու ծիւր, որոնք միշտ պանիրի տեսակը ստորնացնելէ զատ, մակարդն ալ խմորելով կ'աւրեն քիչ ժամանակուան մէջ: Երկրորդ՝ այս կարգի մակարդներու ընդամածիչ զօրութեան աստիճանը անծանօթ ըլլալով, կ'այլափոխի և շատ շուտ կը տկարանայ, այնպէս որ՝ պանրագործը երբէք չգիտնալով իւր գործածելիք մակարդին քանակութիւնը, չինած պանիրները իրարու չեն նմանիր: Այս պակասութիւնները աւելի շատ են տեղական մակարդներու մէջ:

Ամենէն աւելի ընտրելագոյններն են Հիւսա, Եւրոպայի մէջ մասնաւոր գործարաններու պատրաստած մակարդի խտացեալ արտամուգերը (extrait concentré, էէ-լա-ս), որոնք ընդամածելու կարողութեան որոշ և հիմնական չափ ունենալով, պանրագործը ամեն անգամ ուեւէ տրուած կաթի քանակութեան համեմատ զայն գործածելով, կ'ստանայ շարունակ միեւնոյն տեսակի պանիրներու մէջ ճշգրիտ նմանութիւն: Ահա այս պատճառաւ, Եւրոպայի մէջ այդ մակարդներու խտացեալ արտամուգերը ընդհանրացած են, և անոնց չինած պանիրները առ հառարակ աղէկ կ'ըլլան:

Կրնաք պատրաստել հետեւեալ կերպով ընտիր մակարդներ, որ կը մօտենան իրենց բաղադրութիւնով և պատրաստութեան եղանակով, Եւրոպայի գործարաններու չինած արտամուգերուն:

Մակարդի պատրաստութեան համար, ինչպէս ըսինք, կ'ընտրեն մատուղ հորթերու խախացոցները, որովհետեւ հորթը որչափ տարիքը առնէ, այնչափ իւր խախացոցի արտադրած հիւթին մէջ գրունդած ընդամածիչ խմորուկները կը պակ-

սին, և աւելի շատ՝ երբ սկսին խոտով սնանիլ:

Խախացոցները պարպելէ յետոյ լաւ մը կը մաքրեն և փչելով կ'ուռեցնեն. բերանը կը կապեն և կը կախեն որ ինքնիրեն նին չորնան մինչեւ 3 ամիս. ուրիշ վերջը՝ խախացոցին այն մասը որ թերթակներ չի պարունակեր, կը կտրեն կը նետեն, մնացածը խիստ մանր ջարդելով՝ թրջոց կը դնեն 100-ին 3—5 աղ պարունակող ջուրի մէջ, կամ թեթեւապէս քացախ ջուրի մէջ, որուն կը խառնեն նաեւ քիչ մը ոսկերորակի թթու (սէֆ-պօֆօ): Այս թրջոցը կը պատրաստեն հետեւեալ կերպով:

1. Իիթրա ջուրի մէջ հալեցնելու է նախ 50 կուամ աղ և 40 կուամ ոսկերորակի թթու, յետոյ 100 կրամ խախացոցի ջարդուկ խառնելով կը թողուն այսպէս, մերթ ընդ մերթ խառնելով փայտով մը. 5 օր վերջը կ'աւելցնեն նորէն 50 կուամ աղ եւս, և մէկ քանի օր վերջը երբ խառնուրդը հանդարտելով պայծառացած է, մըրցէ կ'անցունեն և կը գործածեն: Այս մակարդը նոր պատրաստուած ժամանակը կրնայ 35 աստիճան բարեխառնութեան մէջ, իր ծանրութեան 18.000 անգամը կաթ ընդամածել, բայց երթալով կը տկարանայ, և շուտով կէսէն վար կ'իջնայ իր ուժը:

2. 1 լիթրա ջուրի մէջ 50 կուամ աղ հալեցուցէք, և մէջը խառնեցէք 100 կրամ խախացոցի ջարդուկ, 5 օր վերջը աւելցուցէք կրկին 50 կուամ աղ, յետոյ 85—100 կրամ բարկ ալքոլ (հարիւրամասնեայի 90—92 աստիճան, որ կը հաւասարի Գաութիլի ալքոլաչափին 37—38 աստիճանին. այս վերջինը՝ Պոլոյ և չրջականերու մէջ օդի շինողները կը գործածեն, և կ'անուանեն հապօ: Մըրցի թղթէ (ֆէլթ) անցուցէք, և պակասածը ամբողջացնելու համար, աւելցուցէք վրան 9/10-ին 10 աղ և 8—9 ալքոլ պարունակող ջուր, և լեցուցէք փոքր շիշերու մէջ, լաւ մը բերանին խցելով զով տեղ մը պահեցէք: Ժամանակ մը վերջը այս մակարդը Եւրոպայի հրապարակները ծախուածներուն

կը համապատասխանէ իր ընդամաթիչ ու-
ծով, և անոր 1 կռամը կրնայ մակարդել
10 քիւօ կաթ:

Որպէս ղի առանց տւրուելու երկար ա-
տեն դիմանայ, այս եղանակաւ պատրաս-
տուած մակարդը, կրնաք խառնել մէջը
քիչ մը աւի՞ր ուղիւնէ:

Հեղանուտ մակարդներէն զատ, հիմա
կըրոպայի մէջ կը ծախեն նաեւ մակարդի
բլիթներ (բասթիլ) կարծրացած, որոնց
գործածութիւնն ալ կը յանձնարարուի:
(Շարունակելի)

Ղ. ԲՈՒՍ

ԱՐՁԱԳԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԻԼՏԻՈՒԷՆ ՎԵՐՁԸ

Բ.

Գերմանիա ներածուած պտուղնե-
րու քանակութեան վրայ գաղափար
մը կազմելու համար, յետագայ վի-
ճակագրութիւնը կը ներկայացնենք,
որ խիստ չահեկան կրնայ ըլլալ:

1897 տարւոյ շրջանին մէջ Գերմա-
նիա ներածուած է, 1.413,728 մեթ-
րական կենդինար, կամ ուրիշ կեր-
պով, 144,372,800 քիւօ թարմ մրգե-
ղէն, որոնց մեծագոյն մասը հետեւ-
եալ երկիրներէն շրկուած է.

Միացեալ-Նահանգներէն	10,336,500	քիւօ
Հոլանտայէն	43,086,600	»
Աւստրո-Հունգարիայէն	30,399,500	»
Իտալիայէն	15,125,900	»
Պելճիգայէն	26,967,100	»

Միւս կողմանէ զոր մրգեղինաց նե-
րածումը կը հասնի 49,122,000 քիւօի,
որուն 17,850,200 քիւօն Ամերիկայէն
շրկուած: Միայն նկատողութեան առ-
նելու է որ, վերոյիշեալ ցանկին մէջ
երեւցած Պելճիգայի և Հոլանտայի

արտածութեանց խիստ կարեւոր մե-
ծամասնութիւնը Ամերիկեան մրգե-
ղէններ են, որ վարպետութեամբ նախ
այդ երկիրները կը ներածեն, և ապա
կը շրկեն Գերմանիա: Սակայն Գեր-
ման կառավարութիւնը իրազեկ ըլլա-
լով գործին էութեան, բողոք բար-
ձած է Միացեալ-Նահանգներու այս
հնարամտութեան դէմ:

Վերոյիշալ վիճակագրութիւնը ներ-
կայացուցած ատեննիս, դիտեցինք
որ, թուրքիա իր արդասարբեր հողե-
րով մաս ունեցած չէ այդ ներածու-
թեանց մէջ. և ամեն օր մեր երկրա-
գործ և պարտիզպան դասակարգը,
իր անյաջողութիւններուն և ապրա-
նաց գոհացուցիչ սպառում չի դըտ-
նելուն համար կը գանգատի. որը՞ ա-
նոնցմէ արդեօք մտածած է — ան-
շուշտ հազուագիւտ բացառութիւն-
ներ կը գտնուին, բայց վերի միլիո-
նաւոր թուանշաններուն քով անոնք
միշտ աննշան կը մնան — փնտռել
գտնել թէ՛ այսինչ երկրի մէջ սա կամ
այն տեսակ բերքը աւելի չահաւոր
սպառում ունի, և կրնայ անկէ օգ-
տուիլ, եթէ իր մշակութեան եղա-
նակները փոխելով, պահանջուած տե-
սակները յառաջ բերէ: Մեր պար-
տիզպանական շրջանակին մէջ հա-
զիւ թէ քանի մը տեսակ ընտիր
մրգեղէններ կը ճանչենք, որոնցմէ ո-
մանք՝ քիչ շատ բնութեան հոգածու-
թեամբ յառաջ եկած են, և խիստ
քիչեր ալ փորձառութեամբ արհես-
տին հմուտ մէկ քանի հազուագիւտ
պարտիզպաններու խնամով. բայց միշտ
երոպական մրգեղինաց հռչակաւոր
ցանկերուն քով՝ անոնք նշանակու-
թիւննին կը կորսնցնեն: Եթէ երբէք
Պոլսոյ և շրջականերու պարտիզպան-
ները, և քիչ մ'աւելի հեռուներուն
ալ փափաքին եւրոպական մրգեղի-

նաց մշակութեամբ զբաղել, միշտ գոհացուցիչ շահեր պիտի կրնան գտնել, իրենց բերքերը արտասահման շրջելով: Մի՛ վախճաք, Ս. Յեսուի ոչիլը տակաւին շատ հեռու է, մինչեւ որ մեզի գայ յուսալի է որ Եւրոպացիք զայն ոչնչացնելու միջոցները գտնեն:

Երեւակայեցէք անգամ մը, Ամերիկան Գերմանիայէն բաժնող անջրպետին պատկառելի հեռաւորութիւնը, որ սակայն արդեւք եղած չէ իրենց մրգաստաններու մինչեւ իսկ թարմ բերքերը հոն շրջել սնտուկներով, Եւ տակաւին կ'ուզէ՞ք որ քիչ մ'աւելի հեռուն երթամ, այդ Եանքիները, առակի կարգ անցած իրենց տարօրինակութիւնով, երբէք գործի մը մեծութենէն չեն խտրչիր և ձեռնարկելու համար 99 կը ծախսեն 100 շահելու հաստատամտութեամբ. մինչդեռ մենք՝ մեր ձեռնարկներուն մէջ 1 կը ծախսենք 100 շահելու յոյսով. անոնք կը յաջողին և միլիոններ կը կորզեն աշխարհէն. մենք կէս ճամբէն ետ կը դառնանք մեծամեծ կորուստներով. Եանքիները երբ կը տեսնեն թէ Եւրոպայի հրապարակը միշտ գոհացուցիչ առեւտուր կ'ըլլայ ընտիր մրգեղինաց վրայ, ահագին ծախքեր կ'ընեն, ընդարձակ դաշտերու վրայ ջերանոցներ կը բարձրացնեն. մինչդեռ մենք՝ մեր կլիմայի նպաստաւոր բարեխառնութենէն օգտուել չենք գիտեր:

Թողունք Գերմանիան, եթէ այդ մրգեղինաց Եւրոպական ընտիր տեսակները մշակենք հոս, չէ՞ք կարծեր որ տեղական հրապարակը գոհացուցիչ կերպով փոխարինէ զանոնք, երբ համաստ տառանորդներով գոհանանք, Ես գիտեմ մէկ-երկու նշանաւոր պարտիզպաններ, որոնք շատ գոհ են իրենց մրգեղինաց հասոյթներէն. Անշուշտ

կրնաք ըսել թէ: երբ մշակողները շատնան, բերքերը իրենց առատութեան մէջ յարգերնին կորսնցնելով, նուազ շահաբեր կ'ըլլայ իրենց մշակութիւնը. Թողունք թէ՛ այս օրինակ պարագաներու մէջ կարելի է նորանոր միջոցներու գիմել զոր օրինակ, եթէ արուեստին քաջ տեղեակ ըլլաք, կրնաք նորանոր տեսակներ Եւրոպայ բերել, բոլորովին տարբեր համով, գոյնով կամ ձեւով, և զանոնք ուշ կամ կանուխ հասունցնելով, միշտ հրապարակին վրայ շահաւոր կերպով կրնան սպառիլ. բայց մտածեցէք թէ, Ռուսիա մեր քթին տակն է, անոր հրապարակին վրայ միշտ գոհացուցիչ գիներ կրնանք գտնել. բայց փոխելու ենք մեր մշակութեանց եղանակները և մրգեղինաց տեսակները:

Ղ. ԲՈԼՍ

ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ

ԾՆԵՅՑՆԻ (Ասքէռժ, զուգ գոմմադ)

ԵՒ

ԻՐ ՄՇԱԿՈՒԹԻԹԻԹԻՆԸ

(Շար. Տես քիւ 1, 2, և վերջ)

Երկրորդ տարուան մշակութիւնք. — Փետրվարի վերջերը երբ օդերը չտուտին, առաջին զբաղումնիդ պէտք է ըլլայ նոր մագիլները տնկել այն տեղուանքը, որ անցեալ տարուան տնկուածներէն ոմանք չի բռնելով չորցած են, եւ որոնց տեղը ամառուընէ մասնաւոր ցիցեր տընկելով նշան բրած էք: Երկրորդ րիչով (շաբաթաշաբաթ) հերկ մը տուէք նախ, որ պէս զի աղբի մնացորդները փշուրելով, հողին երեսը տարածուին, յետոյ երկմատէն բահով (շաբաթաշաբաթ) փորելով, ամենը հաւասարապէս իրար խառնելու եւ ծներեկարանի երեսը շտկելու է: Մարտի կէսին վերջը՝ ընդհանրապէս ծներեկի դեռաբոյս բողբոջները կ'սկսին երեւիլ, այդ

ատեն պէտք է բոլորտիքի հողերով թըմ-
բել (շօղաւը ւեցիւ) տունկերը:

Մայիսին՝ ծնեբեկի ցօղունները արդէն
մեծապէս ուռճած եւ բարձրացած, թա-
ւախիտ ճիւղերով հովերու ազդեցութե-
նէն շատ կը վախճան: Եթէ խաշարներով
(հերէ, Կոյսոյ) չ'ամրացուն, ցօղունները
մագիլներէն զատուելով գետին կը գլորին
եւ տունկը կը փնասուի: Այս խաշարները,
չեղակի հողը մտցնելու եւ այնպէս տուն-
կին կապելու է որ, մագիլները չի փնաս-
ուին. եւ նայելու է մանաւանդ որ, ընդ-
հանրապէս տեղւոյն զօրաւոր հովերուն
ուղղութեան հակառակ տնկուին անոնք:
Պարտիզպաններէ ոմանք խորհուրդ կու-
տան նաեւ, փոխանակ ցօղունները խա-
շարելու, պրկել կողմնակի ցօղուններուն
20րդ ճիւղաւորումէն վեր, որ կարճնալով
հովէն չեն վախճար այլ եւս. բայց այս
պարագային մէջ, տերեւներուն մէկ կա-
րեւոր մասը ջնջուելով, տունկերը օգային
աննդառութենէ մասամբ կը զրկուին եւ
չնչառութիւնը կը դժուարանայ. սակայն
միւսնոյն անգամ ալ խաշարելու մեծ
ծախքէ մը ազատելով, մշակութիւններն
ալ դիւրաւ կը կատարուին:

Այս երկրորդ տարուան աշունին մշա-
կութիւնները ճիշդ առաջին տարուան պէս
են, միայն թէ՛ մոռնալու չէ որ ամառուան
եղանակին ամեն անգամ որ պէտքը տես-
նուի, ծնեբեկարանը գէշ խոտերէ՝ զերծ
պահելու համար բրելու է, եւ հոկտեմ-
բերին կրկին ցօղունները նախորդ տար-
ուան պէս կտրելով այրելու եւ տարածե-
լու է. տունկերը հողմերկելու եւ ամբողջ
խրամները աղբելու է:

Երրորդ տարի. — առաջին բերուցն
կամ բերքաղ (récolte, մահսույ). — Եր-
կու ամբողջ տարիներ անցան ծնեբեկի
տնկարկումէն ի վեր, մէկ տարի մ'ալ սեր-
մանումը՝ ճիշդ երեք տարի վերջը պիտի
ստանանք ծնեբեկի նախախայրին: Եթէ
բոլոր պէտք եղած խնամքները կանոնաւո-
րապէս տրուած ըլլան՝ ինչպէս վերը խօ-
սեցանք, մանաւանդ առանց խնայելու ա-
ռատօրէն աղբուած ըլլայ ծնեբեկարանը,
եւ մագիլներն ալ տնկուած ատեն լաւ

վիճակի մէջ, մեր աշխատութիւնները գո-
հացուցիչ կերպով պիտի փոխարինուին:
Բերունձը կ'սկսի ապրիլի սկիզբները ցուրտ
երկիրներու մէջ. իսկ Պոլսոյ եւ իր շրջա-
կաններու մէջ՝ ծնեբեկը իր առաջին բերքը
կրնայ տալ մարտ 15էն սկսեալ. ուստի՝
բերունձքի սկզբնաւորութենէն 15—20 օր
առաջ աճապարելու է ծնեբեկները թըմ-
բակուտել իր բոլորտիքի փխրուն հողե-
րով: Եթէ կուզէք խոշոր եւ ընտիր ծնե-
բեկներ ունենալ, թմբակոյտերը հետեւե-
ալ կերպով շինեցէք:

Փետրվարին երբ օգերը շտկուին, եւ
հողը ջուրերը քաշած եւ փխրած է ուռե-
լով, երկժանի բրիչով հերկ մը տալու է
նախ՝ ինչպէս ըսինք վերը, եւ երկմատէն
բահով ալ հերկելէն վերջը, ծնեբեկի
տունկերը զգուշութեամբ հոլմերկեցէք.
չորցած ցօղուններուն մնացորդները բո-
լորովին կտրեցէք հանեցէք ճիշդ պսակին
հաւասարութեամբ, որ նոր ծնելիք բող-
բոջներուն արգելք չըլլան ազատօրէն բարձ-
րանալու. եւ որպէս զի իւրաքանչիւր տունկ
հաւասարապէս թմբուի իր արմատներուն
տարածութեամբ, ամեն մէկին վրայ եւ
ճիշդ մէջ տեղէն մէյմէկ ցից տնկեցէք,
առանց մագիլին պսակը փնասելու սակայն.
ցիցին տեղ կրնաք չորցած ցօղունները
գործածել. որոնց բոլորտիքը նախ մէկ եր-
կու բուռ հող լեցնելով, բաւական ամ-
րապնդելու է, յետոյ ակօսներուն բոլոր-
տիքի հողերով թմբելու է վերջնականա-
պէս 36—40 հ.մէթր բարձրութիւն տալով
մինչեւ քաղաթը:

Թմբելու գործողութիւնը ազդուապէս կը
նպաստէ ծնեբեկի ծաւալը խոշորցնելու.
որովհետեւ՝ ծնեբեկարանը եթէ յիշուած
եղանակներով մշակուած է, արմատները
խիստ պարարուն եւ առողջ վիճակի մը
մէջ գտնուելով, նորածիլ բողբոջներուն
առատ հիւթ պիտի մատակարարեն, եւ
սննդեան այս առատութեան մէջ, անոնք
ուժով եւ արագօրէն վեր պիտի բարձրա-
նան անդադար. բայց երբ իրենց վրայ
հողով ծածկենք եւ իրենց ընթացքը ար-
գիլենք այսպէս, փոխանակ իրենց ուժը
երկայնութեան տալու, աւելի լայնութեան

կուտան, որ անհամեմատ խոշորութեամբ եւ արտայայտիչ գոյներով փայլուն ծնեբեկի մատղաշ բողբոջներ կ'ստանաք:

Այս երրորդ տարին՝ որ առաջին անգամ բերք պիտի տայ, պէտք է խնայողութեամբ վարուիլ եւ բողբոջներուն ամենն ալ չի կտրել, այլ բաւականապէս է իւրաքանչիւր ոտքէն 2—3 բողբոջ առնելով. որպէս զի մագիլները ուժասպառ ըլլալով, հետեւեալ տարուան բերունձը չի փլասուի: Զորրորդ տարիէն սկսեալ, կրնաք բոլոր բողբոջները քաղել, բայց երբ կ'ուզէք ծնեբեկարաննիդ երկարատեւ ընել, իւրաքանչիւր տունկի վրայ միշտ 2 զօրաւոր բողբոջներ ձգեցէք, որոնք բարձրանալով՝ օդային սննդառութեամբ արմատները կը բուծեն: Բերունձը՝ մարտի վերջերը սկսելով կը շարունակուի մինչեւ յունիսի սկիզբը, որ վեր ի վերոյ 2 ամիս ըսել է, անկէ վերջը դադարեցնելու է որ տունկերը ուժէ չ'իյնան: Աւելի ցուրտ կլիմայի տակ՝ քերունձը ուշ սկսելով, կը տեւէ մինչ յունիսի 15, ուրկէ վերջը անպատճառ դադարեցնելու է: Տարեկան մշակութիւնները միշտ նոյնն են նախորդ տարիներուն պէս. այսինքն՝ գարունին աւիտները հողաթմբել, եւ բերքաղը շարունակել մինչեւ վերոյիշեալ օրերը. ամառը խաշարել ցօղունները, կամ պրկել եւ բրելով մաքրել հողը. աշունին չորացած ցօղունները կտրել հողէն մինչեւ 30 հ.մէթր բարձրութեամբ, յետոյ հալածելու եւ աղբել: Այս միջոցներով ծնեբեկարան մը 15—20 տարի շարունակ գոհացուցիչ արդիւնք կուտայ:

Սերմերու բերունձը. — Ծնեբեկի ընտիր հունտեր պատրաստելու համար, պէտք է ծնեբեկարանին մէջ որոշել այն տունկերը, որոնք գեղեցիկ, խոշոր եւ առատ բողբոջներ կուտան: Երբէք հունտի համար պահելու չէ այն տունկերը, որ խիստ շատ բողբոջ կուտան թէեւ, բայց բարակ կ'ըլլան. նոյնպէս մէկ կողմ թողելու է անոնք՝ որ թէեւ գեղեցիկ եւ խոշոր, բայց շատ քիչ բողբոջ կուտան: Հնտատու ոտքերը պէտք է 4—7 տարեկան ըլլան:

Հունտերու բերունձը կը կատարուի հոկ-

տեմբերի մէջ, երբ արդէն պողպահատերը բոլորովին հասունցած, բացարձակապէս կարմիր գոյն մը ստացած են: Այն ատեն պողպահատերը ձեռքով փրցնելու է, եւ ամանի մը մէջ ճզմելով, մէկ քանի անգամ ջրով աղէկ մը լուալու է, յետոյ մէջը մնացած սեւ հունտերը բոլորովին մաքուր վիճակի մէջ առնելով, լաթի մը վրայ տարածելու եւ չուքին չորցնելու է:

Դ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ


Թէ ինչպէ՞ս պէ՞տք է ծալլել անձեռոցները (փեշկիթ) սեղան մը զարդաւելու համար

Անշուշտ կը փափաքիք հարսանեաց կամ խնջոյից (շէյֆէթ) առթիւ, ձեր հիւրերուն յատկացած սեղանի անձեռոցները, սիրուն ծալլուածքով ներկայացնել իրենց: Եւրոպական սեղաններու վրայ շատ հրապուրիչ ձեւերով կը ծալլեն անձեռոցները, ինչ որ սեղանայարդարներէ (սոֆիսթը) ոմանք՝ քիչ անգամներ Պօլսոյ տուներու մէջ կ'ընեն թէեւ, բայց մենք նպատակ ունենալով փափաքող՝ եւ չը գիտցողներու սովորեցնել, և մանաւանդ գիտնալով թէ՛ շատ մը Հայ տանտիրիկներ հետամուտ են այս տեսակ զարդարանքներով փայլեցնել իրենց սեղանը. հետզհետէ Հանրապետիկ թերթերուն մէջ պիտի ներկայացնենք իրենց, անձեռոցներ ծալլելու գեղեցիկ եղանակներ, պատկերներով և բացատրութիւններով մէկտեղ:


Բայց նախ ուշադրութիւն ըրէք հետեւեալ հրահանգներուն:

Անձեռոցները պէտք է դամասկեան (դամասկ, քիշմէշ կոչու) կտաւէ ըլլան, և միանգամայն արդուկուած (եֆէլէ): Անոնց երկայնութիւնը 80, և լայնութիւնը 72 հ.մէթր (սոֆիսթէթ) ըլլալու է: Այս տրուած չափերով ճիշտ պատկերին ձեւը կ'ըլլայ. բայց եթէ ձեր ունեցածները այս չափերուն չի յարմարիր, հոգ չ'է, նորէն կ'ըլլայ թէեւ, բայց քիչ շատ տարբերութեամբ:

Անձեռոցներուն ուղուած ձեւը ճշգրտիւ տալու համար, պէտք է քիչ մը բարձրիկէկ սեղանի մը վրայ ծալել զանոնք:



Նախ քակեցէք անձեռոցը եւ սեղանին վրայ փռեցէք. դիմացի կողմերնիդ գլուխուած ծայրերը, որ (1) և (2) թիւերը կը կրեն, բռնեցէք եւ ծալեցէք, (1) և (2)՝ (2) ին վրայ բերելով, որ պիտի առնէ պատկերին մէջի եռանկյանի ձեւը: Վարի աւելցած մասը, իրարմէ 5 հ. մէթր բացութեամբ, երեք անգամ լեր-շերտէ ծալեցէք: Ուրիկէ վերջը, (1) և (3) թիւ կրող



Թիւ 1 — Շուշունի տերեւի (զամպակի եափտաղը ձեւով հողմահար (եղփագի)

կողմէն սկսելով, հողմահարի պէս ծալեցէք. և յետոյ վարի ծայրը գաւաթին մէջ դնելով, ճիշտ թիւ 1 պատկերին ձեւը տուէք:

Նկարում կտրմիւ հաւկիթ

Չատկուան համար անշուշտ պիտի պատրաստէք գունաւոր հաւկիթներ, անոնցմէ մաս մը զատ եփեցէք: Զուրը եռացած ատեն փուռն մը մանիշակ նետեցէք մէջը, երբ հաւկիթները ջուրը ձգէք, մանիշակազոյն դուրս կը հանէք. թուղթերու

վրայ նկարներ գծեցէք ըստ ձեր ճաշակին, կամ եթէ պիտի տննեաք սեղանակից հրաւիրեալներ, անոնց անունները դրէք, և յետոյ զմեկիով կտրտեցէք այդ նկարները, և լուսաւորեցէք. ինչպէս կ'ընեն կաղանդի առթիւ շնորհաւոր նոր տարի գրելու համար: Սրբ հաւկիթները ներկուելէն վերջը պաղին, զատ զատ թուղթերու մէջ փաթտեցէք, այնպէս որ նկարները մէջտեղը գալով, միայն անոնց տեղը բաց մնայ. առէք ծծումբի պատրոյգներ (+խ-խ-խ-խ-խ-խ-խ-խ) որ պատրաստ կը ծախեն, վառեցէք և մէկիկ մէկիկ հաւկիթներուն բաց տեղերը — ուր անուն կամ նկար կայ — ծծումբի մուխին լուսեցէք: որ խիոյն նկարներուն տեղը գունաթափ կ'ընէ, այսինքն կը ձերմկցեն: և երբ թուղթը հանէք վրայէն, կատարեալ կերպով ուզած նկարնիդ գծուած պիտի տեսնէք հաւկիթներուն վրայ, ինչ որ հաճոյալի անակնկալ մը կրնայ ըլլալ ձեր հրաւիրեալներուն համար:

ԱՐՍԷՍ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

Գործիքներ սրելու խմոր մը

Ահաւասիկ միջոց մը, որ ածելիներու կաշիին վրայ քսելով, բարակ գործիքներ սրելու կը ծառայէ, և որ կարելի է չատ մը պարազաներու մէջ գործածել: Աղէկ մը իրար խառնեցէք հետեւեալները, ճարպ կամ աւելի լաւ մեղրամոմ և լուացուած խիստ բարակ զմռնիտ (շփաշա Բօղո), ասոնց չափը բացարձակապէս որոշուած չէ, պէտք է որ խառնուրդը միջին պնդութիւն մ'ունենայ: Նրբ պէտք ունենաք ունէ գործիք սրելու, կը քսէք այս խառնուրդէն կաշիին վրայ, և գործիքը կը սրէք սովորական եղանակով:

Փայտի համար ստիքն (քուրգալ) ջուրի մէջ չի կալող

Սովորական սոսինձին տեղ կարելի է գործածել հետեւեալ խառնուրդը, որ

փայտերը ուժով իրար փակցնելէ զատ, չիրնալէն վերջը ջուրի մէջ ալ չի հալիր: Թարմ և ճերմակ պանիր առէք, լաւ մը լուացէք առատ ջուրի մէջ շարունակ թըրեղով, յետոյ հանեցէք ջուրէն, ուժով սեղմեցէք և ջուրը վազցուցէք: մնացածը որ կծիկը մը ձեւը կ'ունենայ, զով տեղ մը պահեցէք: Միւս կողմէն չի մարած կիր առէք, որ պէտք է ըլլայ աղէկ տեսակէ: ջուրի մէջ թաթխեցէք և անմիջապէս հանեցէք, դրէք որ ինքնին մանրուի, փոշիացուցէք և խիստ բարակ մալէ մը անցունելով, լեցուցէք շիշի մը մէջ, ամրապէս գոցեցէք և պահեցէք: Երբ գործածել ուզէք, խառնեցէք 1 մաս վերոյիշեալ կիրէն 3 մաս պանիրին հետ: Եւ դրէք այնչափ ջուր, որ թանձր սոսինձի հաւասարի: այս խառնուրդը շուտ չորնալուն համար, առ առաւելն 2 ժամէն առաջ մի պատրաստէք: Փորձով հաստատուած ըլլալուն այս մազտաքէին (մամուս, mostie) ընտիր յատկութիւնը. օգտակարապէս կարելի է գործածել ամեն կարգի փայտեղէն շինուածներու, որոնք խոնաւ տեղեր կը մնան, և կամ ջուրի մէջ են. նոյնպէս կարելի է ասով զօգել ոսկեզօծ փայտակերտեր: պատրաստութիւնը շատ դիւրին և աժան ըլլալուն կը յանձնարարուի:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ս. Սափրիչեան էֆ. — Ստացանք, շնորհակալութիւն, թերթին օրինակները աւելցուցինք. ձեր պայմանները ընդունելի են:

ԷՆԿԻՒՐԻԻ. — Գ. Զ. — Շատ լաւ, ստացանք քաղթերնիդ:

ԶՄԻՒՌՆԻԱ. — Կ. Մալէճանեան էֆ. — Շնորհակալութիւն, ստացանք նամակնիդ. ձեր ուզած քանակութեամբ կը ղրկուի:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ս. Մ. — Ստացանք ձեր պատասխանը, կը յարգենք ձեր կամբը: Այս թիւէն կը վերցնենք ձեր անունը գործակալներու շարքէն, ձեր թիւերը կը ստանաք նոր գործակալ Պ. Վահան ձըլկունիէն:

ԻԶՄԻՏ. — Յ. Ն. Սուքիասեան էֆ. — Ստացանք՝ շնորհակալութիւն. կը սպասենք ձեր յօդուածոց, մանաւանդ տեղւոյդ երկրագործական տնտեսական կացութեան վրայ գրուածներու:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Վահան էֆ. Ճիկունի — Նամակ կ'ստանաք. շնորհակալ ենք ձեր զգացմանց. Պարտիզակի գործակալ նշանակուած էք. ուրախ ենք որ կ'ընդունիք. — Այս անգամ թերթերը աւելի կ'ստանաք:

ԵՏԻՐՆԵ. — Ս. Հ. — 50 շրուշ ստացանք. թերթերը կը ղրկուին:

—○○○○—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԹԻՒ 1. — Կ. Պօլիս — Հրանտ էֆ. — Երկաթէ թերթերը ապրիկելու (փէնէճ) ընտրելագոյն միջոցներէն մին է հետեւեալը:

Մաղմաղ կրակի վրայ հալեցուցէք 25 կրամ պէնէ-ֆոսֆորէ կոչուած կուպրի տեսակը — շատ տեսակ պիւթիւմներ կան, սխալ չ'առնէք —, աւելցուցէք վրան հետզհետէ 100 կրամ բեւեկնի իսկութիւն (Բէրեթնի բահու, կամ աղէկ տեսակ Նէֆէ-եալէ) շարունակ խառնելով: Ուժով կրակի վրայ չի հալեցնէք, կուպրը կ'այրի, և տաքութիւնը եթէ շատ ըլլայ, բեւեկնի իսկութիւնն ալ կը բռնկի: Երբ խառնուրդը պատրաստ ըլլայ, պէտք է քսել երկաթէ թիթեղներուն վրայ տափակ վըրձինով մը: Թէ ապրիլը և թէ մետաղը պէտք է տաք ըլլան:

ԹԻՒ 2. — Կերակուր եփելու համար քարիւղի վառարան երկու տեսակ կայ. պատրոյգով և առանց պատրոյգի: Երկուքն ալ աղէկ են. բայց վերջինը աւելի խնայողական է համեմատաբար քիչ քարիւղ վառնուելուն համար, երկրորդ՝ մուխ չ'ունի և աւելի զօրաւոր կերպով կը վառի:

Պ. Աճառեան մեզ կը հարցնէ թէ՛ գառնասունի գոգոս մանքաքը մշակութիւնը ի՞նչպէս կ'ըլլայ: Պատասխանը յաջորդով:

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՆԱՆ



ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՕՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՆԻ Ս. ԻՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Ֆնսիլեան խանի տակ թիւ 3
Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամէն տեսակ թարմ գեղորայք. փրա-
քութեան գործիքներ, Անգլիական և
Գաղղ. պատրաստ գեղեր, գծեակներ,
գինիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլան-
եան և Ս. Իմիրզէ Ընկերութիւնը երկար
ատեն անձնական փորձառութիւններ
ունին: Ամէն ջանք և աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախորդներն գոհաց-
նելու համար, մասնաւոր ուշադրութիւն
կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց
կը դրկեն գեղորայք, ամենայն արա-
գութեամբ, թարմ և մառչելի գներով:
Զարաճի վրակներու և լուերու ելն.
համար միջատասպան փոշի Poudre in-
secticide մեծաքանակ բերել տուած են
ուղղակի Տալմայիայէն, որուն համար
մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք յարգոյ հասարակութեան:

ԴՊՐԱՊԵՏԱՅ ԱԶԲԸ ԼՈՅՍ

Թէ առաւօտեան Սրբազան երգեցո-
ղութիւնք և թէ ի գէմն Ս. Պատարագի
երգեցողութիւնք հրատարակուած են,
փոքրիկ գպիրներու համար: Գինը 20
փարա կը գտնուի Վ. Յ. Մարգարեան
գրատունը, Մերձան փողոց թիւ 57:

ՄԼՈՒՆՆԵՐԷ ՄԻ ԶԱՐԶԱՐՈՒԻՖ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին
Դում-Դարուի կողմերը, սկսած են ի-
րենց անտանների ներկայութեամբ պատ-
ուել:
Մի նեղուիք,
Դիմեցէք Խաչիկ Ֆէստեանի գեղարանը,
Լանկա Ալաճա Մէսհիտ թիւ 9, հոն պի-

տի գտնէք մլուկի փոշի քաւմ, և միանգա-
մայն ամէն գրպանի դիւրամատչելի:

ՏՕԲ. Գ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր Ջղինուորական
և քաղաքային հիւանդանոցներու մէջ
պաշտօն վարած է, պատիւ ունի ծանու-
ցանել թէ այս անգամ իւր բնակու-
թիւնը հաստատած է Գաղղ-Գիւղ Պա-
տէմ փողոց, թիւ 12. ուր հիւանդ կըն-
դունի ամէն օր, ի մասնաւոր աչքի
հիւանդութեանց. իսկ Զորեքչաթի և
Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկե-
ղեցւոյ դիմաց Զպուքճեան Լեւոն Էֆէն-
տիի հանրածանօթ Դեղարանը, և հոն
իրեն դիմող աղքատ հիւանդները ձրի
կը դարմանէ:

9—10



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ՆԱՎԱՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեղալ Պէյ խանի դրան կից, թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդար-
ձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ
ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն
կողմերը: Դաւառներու յանձնարարու-
թիւնները փութով և խնամով կը կա-
տարուին:

Զինական, Հնգհակտն, Ճափայի և Սէյ-
լանի Էն աղբիւ թէյերն ուղղակի բեր-
ուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ այն վաճառանիչին կեղ-
ծերէն:

Փնտռել ՆԱՎԱՐՈՒԵԱՆ ՆԻ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
Ստորագրութիւնը:

Հանրագիտակցութեան հրատարակութեան ամեն նորաթիւնը որ կանոնաւորապէս :
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսագիտական, Արհեստական, Եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր :
 Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
 Բաժանորդագրութիւնը և թղթակցութիւնը ուղղելի են առ

Տնօրէն—Խմբագրապետ Ղ. ԲՈՒՆԱՏ

Ե. Պոլիս, Մահմուտ փառա, Բիւրեճիկ խան Արամեան Տպարան, քիւ 26

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար գիմել

Գրալանճառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀՐԱՄ ԷՔԷՆՏԻԻ

Ե. Պոլիս, Մէրհան Զարգար քիւ 57

Այլ եւս թերթ չը պիտի զրկենք ամեն անոնց, որոնք
 ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ տպս թիւը ստանալէ յետոյ իրենց պարտքը
 վճարել չեն ուզեր :

Մի անգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ՛ պէտք է կան-
 խիկ վճարել ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ստանալու համար. ըլլոյ տարե-
 կան, վեցամսեայ կամ եռամսեայ :

ԳՈՐԾԱԿԱԼ Է ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնքապ. — Գարեգին էֆ. Պողարեան
 Ասա-բազար. — Ստեփան էֆ. Սափրիչեան
 Արաքիւր. — Յ. Պ. էֆ. Մանուկեան
 Գուրս-Պէլէն. Արծ. Տ. Ստեփան քահանայ
 Մկրեան
 Գանիւր. — Մ. Պաղտատար էֆ. Ս. Նա-
 Թանեան
 Էրզրում. — Եղ. էֆ. Տ. Ազարեան
 Թեհրան. — Կարապետ էֆ. Բարսեան
 Իզմիր. — Կարապետ էֆ. Մալեճեանեան
 Իզմիս. — Արրահամ էֆ. Կտաճեան
 Մալկարա. — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան
 Խարբերդ. — Խոսրով էֆ. Բէշիչեան

Կէլիպօլու. — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
 Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
 Մարաւ. — Արծ. Տ. Յովհաննէս քահանայ
 Վարժապետեան
 Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
 Մուշ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
 Պանսրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
 Պարսիզակ. — Վահան էֆ. Ծիլունի
 Պրուսա. — Օննիկ էֆ. Լութֆեան
 Ռոստոք. — Յովհաննէս էֆ. Տէմիրեան
 Սամսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
 Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
 Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան

Հանրագիտակցութեան կը ծախուի ամեն լրագրալանճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պոլոս էֆ. Ազնաւորեանի խանութը :
 Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Զպաքճեան Դեղարանը :
 Սկիւտար, Փիլիթօֆճեան էֆ. խանութը :
 Բերա, Մեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը :